ՈՒՍՈՒՑՉԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՍՏՈՒԳՈՒՄ

2022

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

ԽՄԲԻ ՀԱՄԱՐԸ	
ՆՍՏԱՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ	

Հարգելի՛ ուսուցիչ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:
Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք: Եթե չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

1 **Ստորև նշված տարբերակներից ընտրեք այն, որն ամենաճշգրիտն է նկարագրում «հանդուրժողականություն» հասկացությունը։**

1. Հանդուրժողականությունը ուրիշների արժեքների, մոտեցումների, հավատալիքների և այլ դրսևորումների ճանաչումը, ընդունումը և դրանց նկատմամբ հարգանքն է։
2. Հանդուրժողականությունը հասարակության այլ անդամների ինքնաարտահայտման ձևերի ընդունումն ու հարգանքն է, անգամ եթե դրանց պատճառով սահմանափակվում է այլոց իրավունքների իրացումը։
3. Հանդուրժողականությունը մշակութային ու սովորութային դրսևորումների նկատմամբ հարգանքն է, անկախ մարդու հիմնարար իրավունքների վրա դրանց ազդեցությունից։
4. Հանդուրժողականությունը մշակութային ու սովորութային դրսևորումների նկատմամբ հարգանքն ու տարածումն է, անկախ մարդու հիմնարար իրավունքների վրա դրանց ազդեցությունից։

2 **«Դեմոկրատիա» հունարեն բառը հայերեն նշանակում է. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Հավասարություն
2. Ընտրություն
3. Ժողովրդավարություն
4. Ժողովրդականություն

3 **Ժողովրդավարությունը իշխանության կազմակերպման ձև է, որի պարագայում իշխանության աղբյուր է հանդիսանում։**

1. Մեծամասնությունը
2. Ժողովուրդը
3. Քաղաքացիական հասարակությունը
4. Ազգը

4 **Ըստ ՀՀ Սահմանադրության՝ ո՞ր միջոցով ժողովուրդը չի իրականացնում իր իշխանությունը։**

1. Ազատ ընտրությունների
2. Հանրահավաքների ու քաղաքացիական ակցիաների
3. Հանրաքվեների
4. Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով

5 **Ե՞րբ է ընդունվել ՀՀ Սահմանադրությունը։**

1. 1995 թվականի հուլիսի 5-ին
2. 1990 թվականի օգոստոսի 23-ին
3. 1991 թվականի սեպտեմբերի 21-ին
4. 1991 թվականի սեպտեմբերի 23-ին

6 **Հայաստանում պետական իշխանության ճյուղ չէ. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Դատական իշխանությունը
2. Գործադիր իշխանությունը
3. Սահմանադրական իշխանությունը
4. Օրենսդիր իշխանությունը

7 **Հովանավորի և այլ անձի կամ անձանց փոխշահավետ պարտավորությունների և կապերի վրա հիմնված հարաբերությունների համակարգը կոչվում է։**

1. Կլիենտելիզմ
2. Նեպոտիզմ
3. Ավտոկրատիա
4. Օլիգոպոլիա

8 **Երևանի քաղաքապետին անմիջականորեն ընտրում են. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Ընտրության իրավունք ունեցող Երևանում հաշվառված քաղաքացիները
2. Ընտրության արդյունքում ձևավորված ավագանու անդամները
3. Կուսակցությունները
4. Իշխող կուսակցությունը

9 **Հանրային բարիք է այն. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Ինչի օգտագործումը մեկի կողմից բացառում է դրա միաժամանակյա սպառումը մյուսների կողմից։
2. Ինչը նախատեսված է բոլորի համար, մրցակցային է ու չզատվող։
3. Որի ստեղծվելուց հետո այն կարող է սպառվել բոլորի կողմից առանց հավելյալ ծախսի։
4. Որը նախատեսված է օգտագործման որոշակի սահմանափակող կանոնների համաձայն։

10 **ՄԱԿ-ը ձևավորվել է. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ ապահովելու միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը
2. Առաջին համաշխարհային պատերազմից հետո՝ Վերսալի հաշտության պայմանագրի հիման վրա։
3. Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ կռվելու Գերմանիայի ու դաշնակիցների դեմ, ապա ապահովելու Եվրոպայի անվտանգությունը, խաղաղությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը
4. Սառը պատերազմի ժամանակ՝ դիմակայելու խորհրդային միության դեմ պայքարելու համար

11 **Հատկապես հանցավոր ո՞ր երևույթի դեմ պայքար մղելու նպատակով 2000թ-ին հռչակվեցին ՄԱԿ-ի Գերագույն հանձնաժողովի «Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան» և «Ցամաքով, օդով կամ ծովով մարդկանց ապօրինի փոխադրումների դեմ արձանագրությունը»։**

1. թրաֆիքինգ
2. անօրինական սահմանահատում
3. ծովահենություն
4. ազգամիջյան թշնամանքի հրահրում

12 **«Չորրորդ իշխանություն» են կոչվում. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Քաղաքացիական հասարակությունն ու քաղացիական կազմակերպությունները
2. Կուսակցությունները
3. Ձեռնարկատերերը
4. Լրատվական միջոցները

13 **Մարդու իրավունքները չեն տարածվում. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Ցմահ ազատազրկվածների վրա
2. Պատգամավորական անձեռնմխելություն ունեցող քաղաքացիների վրա
3. Այլ պետության քաղաքացիների վրա
4. Նշված բոլոր պատասխանները սխալ են, քանի որ մարդու իրավունքները հավասարապես վերաբերում են բոլորին։

14 **ՀՀ քաղաքացիների համար քաղաքական իրավունք չէ. նշեք ճիշտ տարբերակը։**

1. Միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունքը
2. Դիմելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունքը
3. Հանրային ծառայություն ընդունվելու իրավունքը
4. Աշխատանքի ազատության իրավունքը

15 **ՀՀ քաղաքացիների համար տնտեսական իրավունք չէ**

1. Հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքը
2. Գույք տնօրինելու իրավունքը
3. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը
4. Հանգստի իրավունքը

16 **Ո՞ր պայմանի բավարարման դեպքում է 14-16 տարեկան երեխաներին աշխատանքը թույլատրվում Հայաստանում։**

1. Ոչ թե մշտական աշխատանք, այլ՝ ժամանակավոր
2. Ծնողի համաձայնություն
3. 1 և 2 տարբերակներում նշված պայմանները պարտադիր են։
4. Ոչ 1, ոչ 2 տարբերակներում նշված պայմանները պարտադիր չեն։

17 **Պետությունը որպես քաղաքական ինստիտուտ՝ օժտված է մի շարք հատկանիշներով։ Նշվածներից ո՞րը պետության հատկանիշ չէ։**

1. Պետությունը միայն կառավարմամբ զբաղվող մարդկանց հատուկ խումբ է՝ հանրային իշխանություն։
2. Պետությունը գերակայությամբ օժտված հատուկ քաղաքական կազմակերպություն է։
3. Պետությունը հասարակական կյանքը կարգավորում է իրավական հիմքերով։
4. Պետությունն օժտված է ինքնիշխանությամբ

18 **Ըստ կառավարման ձևի, պետությունները լինում են երկու տեսակի՝ միապետություն և հանրապետություն։ Նշվածներից ո՞րը միապետության տեսակ չէ։**

1. Դուալիստական
2. դասային ներկայացուցչական
3. խորհրդարանական
4. արիստոկրատական

19 **Պետական իշխանությունն իրականացվում է համոզման և հարկադրանքի եղանակներով: Պետական հարկադրանքն ունի. նշեք ճիշտ տարբերակը:**

1. կամայական բնույթ
2. հայեցողական բնույթ
3. իրավական, որոշակի բնույթ
4. համընդհանուր բնույթ

20 **Պետության խնդիրները և գործառույթները.**

1. նույնական են
2. փոխկապակցված են
3. քարացած են
4. ճիշտ պատասխանը բացակայում է

21 **Համաձայն ֆրանսիացի փիլիսոփա Պոլ Հոլբախի՝ «Պատերազմն օրինական և անհրաժեշտ է միայն այն ժամանակ».**

1. երբ վտանգված է ազգի բարեկեցությունը
2. երբ մղվում է այլ պետության ոչ իրավաչափ գործողությունների դեմ
3. երբ մղվում է պետության զբաղեցրած տարածքը ընդարձակելու համար
4. երբ մղվում է որոշակի քաղաքական նպատակների իրագործման համար

22 **Օրենքը պետական իշխանության օրենսդիր մարմնի կամ համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված և բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ է, որն ունի օրենսդրական գործընթացի հստակ փուլեր: Ընտրե՛ք այն տարբերակը, որտեղ նշված է ճիշտ հերթականությունը:**

1. Օրենսդրական նախաձեռնության փուլ, ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ, օրինագծի քննարկման և ընդունման փուլ
2. Օրինագծի քննարկման և ընդունման փուլ, օրենսդրական նախաձեռնության փուլ, ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ
3. Ընդունված օրենքի՝ ՀՀ նախագահի կողմից ստորագրման և հրապարակման փուլ, օրինագծի քննարկման և ընդունման փուլ, օրենսդրական նախաձեռնության փուլ
4. Օրենսդրական նախաձեռնության փուլ, օրինագծի քննարկման և ընդունման փուլ, ընդունված օրենքի ստորագրման և հրապարակման փուլ

23 **Պատերազմի և խաղաղության հարցերին մեծ ուշադրություն է դարձրել գերմանացի նշանավոր մտածող Իմանուիլ Կանտը: 1795 թ նա հրապարակեց «Հավերժական խաղաղության» իր ծրագիրը, որտեղ առաջ էին քաշվում ժողովուրդների միջև խաղաղ հարաբերությունների հաստատման հնարավոր ուղիներ և միջոցներ: Ստորև նշված մտքերից ո՞րն ընկած չէ Իմանուիլ Կանտի առաջադրած ծրագրի հիմքում.**

1. կառավարման հանրապետական ձևի տարածումը կնշանավորի միջազգային խաղաղության դարաշրջանի հաստատումը
2. պատերազմների հիմնական պատճառը պետությունների միջև նոր հարաբերություններ հաստատելու ձգտումն է
3. ստեղծել պետությունների միջազգային միություն, որում յուրաքանչյուր պետություն իրեն ազատ կզգար և չէր խանգարի մյուսի զարգացմանը
4. պատերազմը քաղաքականության շարունակություն է այլ միջոցներով

24 **Ո՞վ է «Պատերազմի մասին» եռահատոր աշխատության հեղինակը.**

1. Իմանուիլ Կանտ
2. Ժան Ժակ Ռուսո
3. Կարլ Ֆոն Կլաուզևից
4. Պոլ Հոլբախ

25 **Միջազգային մարդասիրական իրավունքի ո՞ր ճյուղն է սահմանում զինված ընդհարման մեջ գտնվող կողմերի իրավունքները և պարտականությունները ռազմական գործողությունների ընթացքում և սահմանափակում հակառակորդին վնաս պատճառելու հնարավոր միջոցները.**

1. Ժնևի իրավունք
2. Ստրասբուրգի իրավունք
3. Հաագայի իրավունք
4. Նյու Յորքի իրավունք

26 **Ո՞ր իրավունքի մասին է ստորև ներկայացված ձևակերպումը.**
«Այն կարգավորում է գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները՝ կառուցված այդ հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարության և գույքային առանձնացվածության մեթոդի հիման վրա».

1. Ընտանեկան իրավունք
2. Քաղաքացիական իրավունք
3. Աշխատանքային իրավունք
4. Քրեադատավարական իրավունք

27 **Ընտրե՛ք սխալ պատասխանը.**

Ամուսնալուծությունը կատարվում է դատական կարգով, եթե՝

1. ամուսիններից մեկը համաձայն չէ ամուսնալուծվելու
2. ամուսինները երկուստեք ցանկանում են ամուսնալուծվել դատական կարգով
3. ամուսինների ծնողները պահանջում են ամուսնալուծությունն իրականացվի դատական կարգով
4. ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը գրանցում իրականացնող մարմիններում կատարելուց

28 **Ինչպիսի՞ պայմանների դեպքում կարող է կնքվել պայմանագիրը.**

1. երբ կողմերը համաձայնության են հասնում պայմանագրի բոլոր էական կետերի վերաբերյալ
2. երբ կողմերի համաձայնությունն իր ձևով համապատասխանում է պայմանագրի ներկայացվող պահանջներին
3. ցանկացած պայմանագիր համարվում է կնքված միայն նոտարի կողմից վավերացնելու դեպքում
4. ճիշտ են 1 և 2 պատասխանները

29 **Գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունելու իրավունք ունի. նշեք ճիշտ տարբերակը:**

1. Աշխատողը
2. Գործատուն
3. Արհմիությունը
4. Հաշտեցման հանձնաժողովը

30 **Սահմանափակ գործունակ անչափահասը գործարքներ կնքում է.**

1. Ինքնուրույն
2. օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ
3. դատարանի վճռով
4. չի կարող գործարք կնքել

31 **Իրավական կարգավորման ո՞ր ձևն է առկա օրինակում.**
Սեփականության իրավունքը պաշտպանելու համար օրենքը սահմանում է, որ ուրիշի գույքի գաղտնի հափշտակումը (գողությունը) պատժվում է ազատազրկմամբ.

1. իրավաստեղծ
2. իրավակիրառ
3. իրավապահպան
4. իրավապաշտպան

32 **Մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմումը ներկայացնելը անհրաժեշտ է.**

1. նախապես դիմել տվյալ երկրի արդարադատության նախարարություն
2. նախապես դիմել տվյալ երկրի նախագահին
3. նախապես սպառել ներքին պաշտպանության միջոցները տվյալ պետությունում
4. չպահպանել վաղեմության ժամկետը

33 **Հին Հունաստանում երկար ժամանակ հենց դա էր համարվում գեղեցիկի չափանիշ. ինչի՞ մասին է խոսքը, եթե հունարենից այդ բառը թարգմանվում է որպես «կարգավորված», «ներդաշնակ»:**

1. էվդեմոնիա
2. փսյուխե
3. անտրոպոս
4. կոսմոս

34 **Ի՞նչ տեսակների էր բաժանում արվեստները Դավիթ Անհաղթը:**

1. վերնախավի և զանգվածի
2. օգտակար և անօգուտ
3. աստվածային և մարդկային
4. գեղեցիկ և տգեղ

35 **«Գործի՛ր միայն այն նորմի համաձայն, որով առաջնորդվելիս միաժամանակ կուզեիր, որ այն դառնա համընդհանուր օրենք». ստորև ներկայացվող հասկացություններից որի բովանդակությունն է արտահայտվում մեջբերման մեջ:**

1. ոսկե միջին
2. հիպոթետիկ իմպերատիվ
3. բարոյական օգտապաշտություն
4. կատեգորիկ իմպերատիվ

36 **Ներկայացված տարբերակներից, ո՞րն է (պահանջմունքը) ըստ ամերիկացի հոգեբան Մասլոուի գտնվում պահանջմունքների աստիճանակարգման բուրգի ամենավերին աստիճանում:**

1. ինքնադրսևորման, ինքնաիրացման
2. պատկանելության և սիրո
3. ֆիզիոլոգիական
4. սեփական արժանապատվության գիտակցման

37 **Ընթերցեք պետության կողմից իրականացվող հետևյալ գործողությունները և պատասխանեք հարցին:**

ա. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամակալության համար տրվող նպաստներ

բ. հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ միջոցներով ապահովում

գ. աղքատ ընտանիքներին տրվող նպաստները և միանվագ դրամական օգնություններ

Ինչպե՞ս են վերը ներկայացված գործառույթներն անվանվում հասարակական գիտություններում:

1. սոցիալական ապահովության միջոցառումներ
2. սոցիալական-կորպորատիվ պատասխանատվություն
3. դրամական խրախուսման քաղաքականություն
4. պարգևավճարներ

38 **Ինչպե՞ս է կոչվում որոշակի ժամանակաշրջանում միջազգային տնտեսական հարաբերություններում որևէ երկրի փաստացի վճարումների և դրամական մուտքերի հարաբերակցությունը:**

1. ծառայությունների հաշվեկշիռ
2. արժույթ
3. վճարային հաշվեկշիռ
4. տրանսֆերտ

39 **Նշեք «իմիգրացիա» բառի հայերեն տարբերակը:**

1. ներգաղթ
2. արտագաղթ
3. ներգաղթի և արտագաղթի հարաբերակցություն
4. փոքրամասնություն

40 **Ուսումնասիրեք ստորը ներկայացված աղյուսակը և ընտրեք ճիշտ տարբերակը աղյուսակի վերջին դատարկ վանդակները լրացնելու համար:**

Օգուտն արտաքին առևտրից բացարձակ առավելությունների դեպքում

Մինչև մասնագիտացումը				
Երկիր	Թողարկում (տոննա)	Արտահանում – Ներմուծում +	Սպառում	Սպառման աճ
A բանան	20	0	20	0
A նարինջ	12	0	12	0
B բանան	10	0	10	0
B նարինջ	60	0	60	0
Մասնագիտացումից հետո				
A բանան	50	-16	34	
A նարինջ	0	+16	16	
B բանան	0	+16	16	
B նարինջ	80	-16	64	

1. +14, +4, +6, +4
2. +34, +20, +6, +14
3. +14, +6, +12, +4
4. +24, +14, +6, +2

41 **Տնտեսագիտության մեջ ի՞նչն է ընդունվում որպես աղքատության գիծ (շեմ):**

1. տվյալ երկրի թոշակի միջին չափը
2. տվյալ երկրի նպաստների չափը
3. տվյալ երկրի միջին աշխատավարձի չափը
4. կենսապահովման նվազագույն բյուջեն

42 **Ընթերցեք տեքստը և պատասխանեք հարցին.**

Եռանկյան ներքին անկյունների գումարը 180 աստիճան է։ Ուղղանկյուն եռանկյունին եռանկյան տեսակ է, հետևաբար, ուղղանկյուն եռանկյան ներքին անկյունների գումարը 180 աստիճան է։

Մտահանգման ինչպիսի՞ տեսակ է վերը ներկայացվածը։

1. ինդուկտիվ
2. թույլ հիմնավորված
3. դեդուկտիվ
4. չհիմնավորված

43 **Ներկայացված մտահանգումների եզրակացությունները համապատասխանեցրեք մտահանգման տեսակի հետ։**

ա. Գայանե և Սպարտակ բալետների հեղինակը Արամ Խաչատրյանն է։
Ալմաստ օպերայի հեղինակը Ալեքսանդր Սպենդիարյանն է։
Անուշ օպերայի հեղինակը Արմեն Տիգրանյանն է։
Առնո Բաբաջանյանը հեղինակել է ջազային երաժշտություն։
Արամ Խաչատրյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, Առնո Բաբաջանյանը, Արմեն Տիգրանյանը հայ կոմպոզիտորներ են։
Հետևաբար՝ հայ կոմպոզիտորները հեղինակել են օպերաներ, բալետներ, ջազային երաժշտություն։

բ. 2022թ-ի դրությամբ շախմատի աշխարհի չեմպիոնը նորվեգացի է, հետևաբար 2022թ-ին Նորվեգիա ավելի շատ զբոսաշրջիկ է այցելելու, քան Եվրոպայի որևէ այլ երկիր։

գ. Արմենը ուսումնական տարվա ավարտից երկու ամիս առաջ գրականություն առարկայից ունի հինգ հատ «9» գնահատական, հետևաբար, նրա կիսամյակային գնահատականը գրականությունից կլինի «9»։

դ. Օլիմպիական խաղերի չեմպիոններին տրվում է ոսկե մեդալ։
Ծանրամարտը օլիմպիական մարզաձև է։
Հետևաբար՝ Օլիմպիական խաղերում ծանրամարտի հաղթողը ստանում է ոսկե մեդալ։

1. թույլ հիմնավորված եզրահանգում
2. չհիմնավորված եզրահանգում
3. ինդուկցիա
4. դեդուկցիա

44 **Հասկացությունը համապատասխանեցրեք բացատրությանը:**

ա. արտասահմանյան երկրում երևէ ձեռնարկության բաժնետոմսերի ձեռքբերում

բ. տվյալ երկրի դրամական միավորի գինը՝ արտահայտված մեկ այլ երկրի դրամական միավորով

գ. մասնավոր կամ պետական դրամական անհատույց փոխանցում

դ. բնակչության արտագաղթը և ներգաղթը

1. արժույթի փոխարժեք
2. պորտֆելային ներդրում
3. միգրացիա
4. էմիգրացիա
5. տրանսֆերտ

45 **Համապատասխանեցրեք պատասխանատվության աղբյուրները դրանք արտահայտող օրինակների հետ:**

Ա. Խոստում

Բ. Աշխատանքի բնույթ

Գ. Սովորույթ

Դ. Օրենք

1. Զիջել տարեցներին հասարակական փոխադրամիջոցներում
2. 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիների պարտադիր զորակոչ
3. Դասախոսի կողմից դասավանդման գործընթացի կազմակերպում ու ուսանողների հետազոտական աշխատանքների ուղղորդում
4. Ժամանակին ու ճիշտ չափով ընկերոջից վերցրած պարտքի վերադարձ

46 **Վարքի օրինակները համապատասխանեցրեք կոնֆլիկտային իրավիճակներում մարդու վարքի երեք մոդելների հետ։**

Ա. անձը ձգտում է սրել կոնֆլիկտը, շփման մեջ չի պահպանում համապատասխան նորմերը

Բ. անձը խուսափում է սուր հարցերից, շատ արագ համաձայնվում է հակադիր կողմի հետ, պասիվ է

Գ. անձը ձգտում է հարթել կոնֆլիկտը, ցուցաբերում է զսպվածություն

1. կոնֆորմիստական
2. կառուցողական
3. ապակառուցողական

47 Համապատասխանեցրեք արվեստը իր նկարագրության կամ անվանման բացատրության հետ։

Ա. արվեստի այս տեսակի նպատակն է իրական տարածության ձևավորումը գեղեցիկի կանոններին համապատասխան

Բ. ռիթմիկ մեղեդու ուղեկցությամբ, ազդեցությամբ և դրանց (ռիթմին, մեղեդուն) համապատասխան արվող մարդու շարժումների ամբողջությունը

Գ. արվեստի այդ տեսակի անվանումը ծագում է հունարեն «շարժել», «շարժվել» բառերից

Դ. արվեստի այս տեսակի նպատակն է ստեղծել կենցաղի առարկաներ և ձևավորել մարդու միջավայրը գեղեցիկի կանոններով

1. ճարտարապետություն
2. դեկորատիվ-կիրառական արվեստ
3. կինո
4. պար

48 **Համապատասխանեցնել հասկացությունը բովանդակության հետ.**

1. պարտքի ներում
2. նորացում
3. հրաժարագին
4. պարտապանի կամ պարտատիրոջ մահը

ա/ կողմերը համաձայնվում են հին պարտավորությունները փոխարինել նորով, որը նախատեսում է դրա այլ առարկա կամ կատարման այլ եղանակ

բ/ պարտատերը պարտապանին ազատում է իր պարտքից

գ/ այս հիմքերով պարտավորությունը դադարում է, եթե կատարումը չի կարող տեղի ունենալ առանց նրանց անձնական մասնակցության կամ այլ կերպ անխզելիորեն կապված է նրանց անձի հետ

դ/ կողմերի համաձայնությամբ պարտավորությունը կարող է դադարել՝ կատարման փոխարեն դրամ վճարելով, գույք հանձնելով

49 **Եթե չկա կտակ կամ դրանում սահմանված չէ ամբողջ ժառանգության ճակատագիրը, ժառանգությունը կատարվում է ըստ օրենքի։ ժառանգներին դասավորե՛ք օրենքով սահմանված հերթականության.**

1. Առաջին հերթի ժառանգներ
2. Երկրորդ հերթի ժառանգներ
3. Երրորդ հերթի ժառանգներ
4. Չորրորդ հերթի ժառանգներ

Ա. ժառանգատուի հարազատ եղբայրներ և քույրեր

Բ. ժառանգատուի ինչպես հայրական, այնպես էլ մայրական կողմի պապը և տատը։

Գ. ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները

Դ. ժառանգատուի ծնողների եղբայրները և քույրերը

50 **Ուշադրության տեսակը համապատասխանեցրեք իր բնութագրին։**

1. կամածին
2. հետկամածին
3. ոչ կամածին
4. ներքին

Ա. Մարդու հոգեկան գործունեությունն ուղղված է դեպի սեփական ներաշխարհի բովանդակությանը։

Բ. Մարդը, ելնելով կոնկրետ նպատակից, ջանք գործադրելով հոգեկան գործունեությունն ուղղում է որևէ առարկայի կամ երևույթի վրա։

Գ. Ծնվում է ջանքի շնորհիվ, սակայն հետզհետե այդ ջանքի կարիքը կորչում է։

Դ. Մարդն ինքնաբերաբար, իր կամքից անկախ ուշադրություն է դարձնում որևէ առարկայի կամ երևույթի։

51 **Եվրոպայի քաղաքակրթական զարգացման ու ինտեգրման պատմական փուլերը դասավորեք ըստ ժամանակագրական հերթականության՝ ամենավաղ փուլից մինչև ամենանորը։**

1. Անտիկ շրջան
2. Վերափոխություն (Ռեֆորմացիա)
3. Միջնադարյան քաղաքների ձևավորում
4. Եվրոպական միասնացում (ինտեգրում)
5. Ավատատիրություն

52 **Հանրային քաղաքականության գործընթացի փուլերը դասավորեք ըստ դրանց կատարման հերթականության։**

1. Գնահատում/արժևորում
2. Մուտք/ներդրում
3. Իրականացում
4. Որոշումների կայացում
5. Ելք/արդյունք

53 **Ստորև ներկայացվող բնութագրիչներից ընտրեք ուշադրության (որպես մարդու հոգեկան գործունեության ուղղվածություն և կենտրոնացվածություն)՝ հոգեբանությունում ընդունված առանձնահատկությունները:**

1. ալտրուիզմ
2. բաշխում
3. ապերցեպցիա
4. տեղափոխելիություն
5. վերարտադրում

54 **Կոնֆլիկտի կառավարման քայլերը դասավորեք ըստ հերթականության՝ դրա ծագումից մինչև չեզոքացում:**

1. Կոնֆլիկտի կանխարգելում
2. Կոնֆլիկտի լուծում
3. Կոնֆլիկտի կարգավորում
4. Կոնֆլիկտի կանխատեսում

55 **Մեջբերված արտահայտությունները դասավորեք ըստ հերթականության՝ առաջին մակարդակից դեպի երրորդ մակարդակ ըստ աստիճանների՝ հիմք ընդունելով Լ. Քոլբերգի բարոյական կշռադատման եռամակարդակ սանդղակը:**

1. «Եթե այդպես վարվեմ, ի՞նչ կմտածեն ընկերներս»
2. «Տնօրենն ասում է, որ այդպես անեմ, այլապես կպատժվեմ»
3. «Սա՞ է լավագույն քայլ իմ հասարակության համար»
4. «Եթե այս օրենքը հասարակության համար լավ չէ, ապա այն կարող է փոփոխվել»

56 **Նշվածներից, որո՞նք են հիշողության գործընթացները:**

1. մտապահում
2. պատկերավոր հիշողություն
3. մոռացում
4. կամածին հիշողություն
5. վերարտադրում
6. ոչ կամածին հիշողություն
7. շարժողական հիշողություն

57 **Որո՞նք են աշխատանքի միջազգային բաժանման նախադրյալներ։**

1. կրկնվող պատերազմները
2. բնական ռեսուրսների անհավասար բաշխվածությունը տարբեր երկրների միջև
3. բնակլիմայական պայմանները
4. բնական աղետները
5. պետական կառավարման համակարգի տեսակը
6. գիտակրթական և տեխնոլոգիական զարգացման մակարդակը

58 **Որո՞նք են միջազգային մարդասիրական իրավունքի պայմանական անուններով հայտնի ճյուղերը։**

1. «Ստրասբուրգյան իրավունք»
2. «Հաագայի իրավունք»
3. «Ժնևի իրավունք»
4. «Մինսկի իրավունք»
5. «Փարիզի իրավունք»

59 **Նշվածներից որո՞նք են ինդուկտիվ հետազոտության փուլեր։**

1. Փորձի միջոցով վարկածների ստուգումը
2. Կրոնական դոգմաների հերքումը
3. Հարցումները
4. Արդյունքների փորձարկումը արտադրության մեջ
5. Կատարել ընդհանրացումներ, դուրս բերել կանոններ

60 **Նշվածներից որո՞նք են պարտավորության կատարման ապահովման լրացուցիչ եղանակները։**

1. Պարտքի ներում
2. Կոնկլուդենտ վարք
3. Նախավճար
4. Աշխատավարձի պահում հօգուտ գործատուի
5. Պարտապանի գույքի պահում
6. Գրավ
7. Հավելավճարներից զրկում